

5695



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար



Հակոբ Սիմիոյան
«16» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 142 - 25

Նախաձեռնող՝

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի փ. 1

Գործունեությունը՝

Հայկաշեն բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցում
Արմավիրի մարզ

Առդիր՝ 6 թերթ

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Կառուցապատման ենթակա հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.9365 հա: Նոր դպրոցը կառուցվելու է գոյություն ունեցող դպրոցի տարածքում՝ գյուղի արևմտյան մասում: Վերջինս նախատեսվում է ապամոնտաժել, որը կիրականացվի առանց պայթեցման: Քանդման աշխատանքների ընթացքում առաջացած շինարարական աղբը անմիջապես տեղափոխվելու է նախապես համայնքապետարանի հետ համաձայնեցված աղբավայր:

Նախատեսվող դպրոցը կազմված կլինի երեք իրար կցված շենքերից, կունենա նաև նկուղային հարկ՝ 21.6x20.4 մ չափերով, որը կկիրառվի որպես թաքստոց: Նկուղային հարկում նախատեսված են գրադարան, խոհանոցային սենյակ, բուժկետ, սանհանգույց, էլեկտրովահանակ, ջրի ռեզերվուար, էլեկտրական կաթսաների սենք, կոյուղու պոմպարան:

Դպրոցի հիմնական մասնաշենքի երկրորդ հարկի գլխավոր մուտքի աստիճանների մոտ դպրոցական հանդիսությունների համար նախատեսված է հարթակ: Նախասրահին կից կլինի ռեկրեացիոն գոտին, որի աջ և ձախ կողմերում տեղավորված կլինեն դասասենյակները, կաբինետները, տնօրենի առանձնասենյակը՝ ընդունարանով, բժշկի, մարզիչի սենյակը, բուֆետը՝ խոհանոցային մասով, սանհանգույցներ և այլն: Նախասրահի աջ մասում նախագծված են մարզասրահը՝ 24.50x17.95 մ չափերով, հանդերձարաններ՝ տղաների և աղջիկների համար, 144 տեղանոց հանդիսությունների դահլիճը: Դահլիճներում նախատեսված առանձին մուտքերը հնարավորություն կտան դահլիճներն օգտագործել գյուղի միջոցառումների համար: Երկրորդ հարկում նախատեսված են դասասենյակներ, ռազմագիտության, ռոբոտատեխնիկայի կաբինետներ, ուսուցչանոց, սանհանգույցներ, մարզադահլիճի տրիբունա: Երրորդ մասնաշենքում նախատեսված են չորս դասարաններ, ուսմասվարի կաբինետ և սանհանգույցներ: Նախատեսվում է մարզադաշտ՝ 20x40 մ չափերով, 120 նստատեղով:

Սակավաշարժուն խմբի երեխաների համար նախատեսված է տեղադրել վերելակ:

Դպրոցի տարածքը սահմանազատված կլինի 1.30 մ բարձրություն ունեցող մետաղական ճաղաշարով: Նախատեսվում է ճանապարհի ասֆալտապատում, մայթերի և սալվածքների սալարկում՝ բետոնե գունավոր մայթի սալիկներով, բազալտից եզրաքարերի տեղադրում, խաղադաշտի և սպորտհրապարակի կառուցում՝ ռետինե ծածկույթով և արհեստական խոտածածկույթով: Դպրոցն ապահովված կլինի օդափոխության ներածման և արտածման համակարգերով:

Հողամասի արևելյան հատվածում տեղադրված կլինեն արևային մարտկոցները 1897.5 քմ տարածքով, 149.6 կՎտ դրվածքային հզորությամբ:

Էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն «ՀԷՏ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ LՏԵ-400կՎԱ/10(6)/0.4 կՎ լրակազմ տրանսֆորմատորային ենթակայանից:

Նախատեսվող ջրագիծը կիրականացվի համայնքային ցանցից, ջրամատակարարման ներբակային ցանցի համար նախատեսվում է կառուցել $d=63(\text{Պ/էթ})$ մմ, $L=63.70$ մ երկարությամբ ջրագիծ:

Նախատեսվում է ջրահեռացման համակցված համակարգ, դպրոցի վերջետնյա հատվածի կոյուղին ինքնահոս կետանա բակային ցանց, իսկ նկուղային հատվածում նախատեսված սանհագույցների կոյուղին՝ բակային ցանցին կմիանա կոյուղու ճյուղային տարբավորման



օգնությամբ: Նախատեսվող կոյուղագիծը կմիանա տարածքում նոր կառուցվող կոյուղու մաքրման «Точак 100» սարքավորմանը:

Ջեռուցումը նախատեսվում է էլեկտրական յուղային ռադիատորներով, բացառությամբ՝ սպորտսրահից, որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1. հողամասի մակերես՝ 9365 քմ,
2. կառուցապատման մակերես՝ 1635.40 քմ,
3. կանաչապատման մակերեսը՝ 1986.05 քմ,
4. բաց սպորտհրապարակ՝ 1334.50 քմ,
5. արևային մարտկոցների զբաղեցրած տարածք՝ 1897.50 քմ,
6. ջերմոց՝ 32 քմ,
7. ճանապարհներ՝ 1603.90 քմ,
8. մայթեր՝ 860.80 քմ,
9. ելք թաքստոցից՝ 14.80 քմ:

Նախատեսվող գործունեության կառուցապատման ժամանակ հանվող բուսահողի ծավալը կկազմի մոտ 2700 խմ: Կատարվելու են հողային աշխատանքներ՝ 2750 խմ ծավալով, որից հետոյիցքը կկազմի 825 խմ, իսկ մնացած հողային զանգվածը կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքում իրականացնել կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ: Տարածքում առկա են ծառաթփային բուսականություն, դպրոցի կառուցման ընթացքում նախատեսվում է հատել մոտ 30 ծառ: Համաձայն կանաչապատման սխեմայի նախատեսվում է տնկել թխկի սրատերև կարմիր՝ 8 հատ, սյունածև թույա՝ 29 հատ, բարդի արծաթափայլ՝ 18 հատ, գնդածև իլենի՝ 31 հատ, սիզամարգեր և այլն: Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց, որն իրականացվելու է կաթիլային եղանակով:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, փորման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինհրապարակի ցանկապատում՝ համապատասխան բարձրության ցանցով, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, շինարարական աղբի տեղափոխում հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով և այլն:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար, անձրևաջրերի և շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան, որտեղ տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են



- հողային աշխատանքների արդյունքում հանված հողի բերրի շերտը մինչև օգտագործելը պահել շինհրապարակում՝ ծածկված վիճակում և առանձնացված վայրում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը,
- հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողային զանգվածը դարսել լայնակույտերով, որոնց բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը,
- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար, պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր, այն փոխարինել նորով և այլն:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝

- թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն՝ շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար,
- շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից,
- հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել,
- անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգեր,
- անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում,
- վտանգավոր արտահոսքերի դեպքում անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը,
- առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ պետք է տեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր և այլն:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում՝ տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,



- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լուսմների ժամանակ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Արմավիրի մարզպետարանից, Արաքսի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադքի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված վայր:
3. Կանաչապատումն իրականացնել համայնքի հետ համաձայնեցված՝ տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման և ավերակների դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:



ԵՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝



[Signature]
Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

[Signature]

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝

[Signature]

Սվետլանա Կիզիրյան